

## ԲԱՆՍԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՅԵԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՐԳ  
ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԵԱՑ ՀԵՑ

(շարունակութիւն տես) Թիւ Թ. և Վերջ)

Այնպէս կենդանին ինչպէս որ մեծ  
գաղափար ունի իւր կեանքին վերայ,  
նոյնպէս վերան մահուան պարզ պատկե-  
րը կ'կրէ:

Վաճառուէն կ'զգայ իւր կեանքին  
վտանգ սպառնացող կատաղի գազանը,  
թէ և զայն առաջ ամենևին տեսած չէ:  
Այնպէս երկիւղով մի յափշտակուած  
վտանգէն կ'փախչի, թէ և իրեն դեռ  
վտանգ մի պատահած չէ. իսկ վտան-  
գը անցնելուն պէս, իսկոյն ամեն բան  
կը մոռնայ: Վառնուկը հանդարտա-  
քայլ կերթայ սպանդանոցը, թէ և տե-  
սած է ուրիշ գառնուկներուն մոր-  
թուիլը: Մահուանէ չ'վախնար՝ վտան զի  
հասկացողութենէն վեր է՝ թէ ինչ է  
մահը. միայն ցաւը կ'զգայ մորթուելու  
ատեն և կողկողաձայն մայելլը կարծես  
թէ գթութիւն կաղաչէ:

Անգութ և անզգայ է այն մարդը որ  
իւր անձնական արիւնարբու շահին հա-  
մար կ'մեռցնէ այնպիսի կենդանի մը. որ  
իւր կեանքովը վնաս և մահուամբը օ-  
գուտ չ'բերէր: Կենդանին ալ մեզ պէս  
կ'զգայ ցաւն ու ցնծութիւնը. նա ալ  
ստեղծուած է այս արագասահ կեանքը  
վայելելու համար: Ինչ իրաւունք ու-

նիմք մեռցնել անշնչացնել այն կեն-  
դանին, որ շունչ ու կենդանութիւն ըն-  
դունած է աստուածային նախախնամու-  
թենէն:

Ինչպէս կ'յանդգնիմք դադրեցնել  
այն կեանքը, որ կարող է ուրիշ հազարա-  
ւոր արարածոց շահաւէտ լինել, թէ և  
մեզ ոչ օգտակար է և ոչ վնասակար:

Պարտքը մեզ կպատուիրէ չմեռց-  
նել անվնաս կենդանիները, և գոնէ զա-  
նոնք մեռցնելու ատեն որչափ կարելի  
է՝ շուտով վերջ դնել նոցա չարչարան-  
քին: Եթէ մարդ մի այս ճանաչողու-  
թիւնը ունի, և գործով իսկ կը կատարէ,  
կցուցնէ թէ խելքով նոցանէ վեր է,  
և փափուկ ու զգայուն սիրտ մի ունի:  
Ուստի՝ որչափ կարելի է կանուխ տղա-  
յոց հասկացնելու է այս պարտքին ան-  
հրաժեշտ հարկաւորութիւնն ու սրբու-  
թիւնը. որպէս զի մատղաշ հասակէն  
սորվենան տկարը չատել և անզէն եղողին  
վէհանձնաբար ներել:

Ինչպէս և անզէն կենդանեաց տանջան-  
քը անգթաբար տեսնել սիրող տղան  
շուտով կը սորվի ուրիշի արցունք թա-  
փելուն վերայ խնդալ: Ինչհակառակն  
զգայուն սիրտը, որ չկրնար անտարբե-  
րութեամբ և առանց խղճահարութեան  
թուլնակի մը, անվնաս որդի մը մահը տես-  
նել, այնպիսին նաև տրտմազգեաց ընկե-  
րին կամ բարեկամին չկրնար կարեկցու-  
թիւն ցոյց չտալ, և կամ ըստ կարինո-  
րա նեղութիւնները թեթեւցնելու ճա-  
նապարհ չորոնել:

Ի այց մարդուս աւելի մօտ են ընտանի կենդանիները. նոքա կարծես թէ իւր գերդաստանին մէկ մասը կբաղկացնեն, Սարգն է նոցա բնական պաշտպանն ու խնամակալը. նոքա ևս նորա օգտին համար կապրին: Իրենց տէրը նոքա հեռուէն կճանչնան, կսիրեն զինքը, ուրախութիւնդ կենեն, երախտագիտութիւնը նշաններով կընդունին նորա ընծան: Ինութիւնը զըկեր է զանոնք բանականութենէ. բայց նոքա նշանացի կցուցանեն իրենց սէրը, երախտագիտութիւնը և հնազանդութիւնը:

Մարդ պարտական է ամեն բանի մէջ խնամել այն անբան արարածները, որ իրեն ծառայելու համար նախասահման ված են: Իսկ որ անոնք ալ ուրիշ անտառային և դաշտային կենդանեաց նըման ազատ լինէին, կարող էին իրենց սնունդ և ապաստանարան գտնել:

Մարդս իւր օգտին համար զըկեց զանոնք ազատութենէ. ուստի և հետեալ բար պարտական ըրաւ ինքզինքը հոգալ զանոնք, տալ իրենց այն սնունդը, զոր իրենք ծառայութեան մէջ լինելով կարող չեն գտնելու:

Մյա ուրեմն մարդս ամեն բանէ առաջ նոցա հետ սիրով պիտի վարուի, հարկաւոր կերակուրը պիտի տայ, ցրտէ պիտի պահպանէ, նոցա մաքրութեանն ու առողջութեանը վրայ հոգ պիտի տանէ, և կարողութենէ վեր աշխատանք պիտի չնշանակէ:

Մենայն ազգ, վայրենիներն անգամ

ընտանի կենդանիներուն վերայ առանձին հոգ ու խնամք ունին: Ինչպէս ցաւալի է տեսնել այն քրիստոնեաները, որ անզգայ սրտով կտանջեն իրենց հաւատարիմ օգնականները և կարգէ դուրս խտուածամբ նոցա հետ կվարուին: Ինչպէս ցաւալի է տեսնել, որ շատերը իրենց կոյր շահին համար՝ կենդանեաց կարողութենէ վեր բաներու զանոնք կգործածեն: Մտուծոյ Սովսէս մարգարէին Սինա լեւան վրայ տուած օրէնքն անգամ կսորվեցնեն որ գթութիւն պէտք է ունենալ կենդանեաց վերայ: Իսկ եօթներորդ օրը շաբաթ է Մտուծոյ, կասէ, այն օրը գործ մի՛ գործեր, ո՛չ դու, ո՛չ որդիդ, ո՛չ աղջիկդ, ո՛չ գերիդ, ո՛չ գերիիդ կնիկը, ո՛չ կովդ, ո՛չ էջը, և ո՛չ բոլոր հօտդ, նոյն իսկ տունդ իջևանած ճանապարհորդը:

Իսկ պէտեւ մեր խնամակալութիւն տակ եղող կենդանեաց վրայ պէտք է գութ ունենալ, բայց պէտք չէ որ կարգէ դուրս լինի այս գութը, զոր միայն մարդ մարդոյ կուենայ:

Մեր զգացմունքը, չափէ դուրս գութ և սէր կենդանեաց վրայ ունեցող մարդը կ'յայտնէ իւր տկարամիտ լինելը, և կ'ցածցընէ մարդկային արժանաւորութեան գինը, զայն անբան անասնոց նուիրելով:

Սերջապէս չմոռանամք ընել այն բարերարութիւնը և ունենալ այն սէրը կենդանեաց վրայ, զորս աստուածային օրէնք կպատուիրեն, չմոռանամք որ ա-

նոնք ալ Մատուցոյ արարածներն են, որ կ'ընէ նոցա աղաղակն ու բողոքը, կը տեսնէ նոցա քաջած ներդուծիւնները, ճշմարտեմք այն խօսքը թէ. "արդարն ողորմի անասոյ իւրումն, և չուրանամք այն խրատն ու խոստումը թէ՛" "երանի ողորմածաց սրտիւք, զի նոքա ժառանգեցցեն զարքայութիւն երկնից":

Ս. Էջմիածին Թարգ. Ս. Մարութեանց

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ**

Յ օ ր ա գ ր ու ք ե ա ն ց Ս ի ն ո ղ ի

Փետր.— Էջմիածնայ գաւառի Գեշրու գեղջ ծխական Յովնաննէս Բահանայն, իւր սուրբ կոռման հակառակ ընթացից մէջ գտնուած է Բանիցս խրատ ու յանդիմանութիւն լսելէն վերջը դարձեալ անողղայ մնալով ի գայրակցութիւն Բազմացի վերջոյ իսպառ գրկեցու Քահանայական կառնէն, և հարկատուաց կարգը հաստատելոյ աղագաւ Քաղաքական իշխանութեան Տնօրէնութեանը յանձնուեցաւ:

Մարտ.— Արժա. Սուքիաս վարդապետն Պարգեան, որ Տիխիսայ Կոնստանտինոպոլսի անդամ էր, Ալապղիսոյ Բաղախին Յաջորդ նշանակեցաւ ի սեպի Ակրսիք եպիսկոպոսի Բարամեանց:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ՅԵՐԵՒԱՆ**

Հեթեմեալէ՛ Է՛ր Երեւանայ մէջ Բշեմիցու Արարատոյ տնայնէ մարտմագրոյ մէջ հրատարակել խնդրած էր. որքէն մէջ Բեթլեյմ մասնոյ յանդիմանած գրեւորելոյն առթիւ. պարտաւրջեցանք ներքոյ տնագրութեան հարգելէ մէջ սիրելէ Աշտոնացի:

"Ընցեալ փետր. ամսոյ 16, 25 և 28 նին Արեւանայ քաղաքիս Հայոց ջեր-

մեռանդ խումբը՝ հոգացողութեամբ և վերատեսչութեամբ պ. Սողոմոնի Մաքարահամեան Մալաթիէի քեանց Տիխիսեցոյ յօգուտ երկսեռ դպրոցաց քաղաքիս՝ երկու անգամ "Շուշանիկ" ողբերգութիւնը (Երկրորդը ըստ խնդրանաց և փափաքանաց ժողովրդեան ներկայանալու պատուոյն և համակրութեան արժանացաւ), և միանգամ "Արուանդ Բըն Հայոց լիւնական դպրոցի դահլիճի մէջ պատրաստուած Թատրոնական բեմի վերայ՝ առաւել քան զհարծիս՝ յաջող և սրտաշարժ ներկայացցցց: Օր նաև պիտի շարունակէ զնի ս. Օրակին վերջի շէալ նպատակաւ\*:

Նիշեալ ներկայացմանց մէջ առաւել սշնոյժ և ըտարժանւոյն ներկայացուցին իւրեանց դերերը պ. պ. Միւսէն վարժապետ Փիլիպոսեանց, նա հայտատէր՝ Յովնակիմեանց և Մահապետ Միսնասեանց, նոյնպէս և համեստափայլ օրիորդ Աղիսաբէթ Վօրղանեանց, որ առաջինը եղած է Արեւանայ Հայ տիկնայց և օրիորդաց մէջ լիստրոնական բեմի վրայ հանդիսացող, ներկայացնելով "Շուշանիկ" դերը:

Ուտի համայն հանդիսականաց հետ

\*) Ըստ այժմոյս ելեք անդամի ներկայացմանը որ գումարեց 600 մանկթի շափ, գրեթէ թատրոնական տեսաւ անի և այլն պարագայից բոլոր ծախքերը վճարեց, զոր ալ աւճ էր առանց տոկոսեաց եղեւանցի պ. Մկրտիչ Էովհաննիսեանց, և և յետ այսօրիկ ներկայացմանց արդիւնքները պիտի մնան բոլորովին յօգուտ երկուսու գլխոցաց Հայոց քաղաքիս: